ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2014 թ. -01.09.2015 թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված
Աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԶԻԼԻՖՅԱՆ

ՍԱՐԱԼԱՆՋ 2015 Թ.

Հարգելի Սարալանջ համայնքի բնակչություն 2014 թվականի երկրորդ և 2015 թվականի արաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ***ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ***

2013 թ. դեկտեմբերի 12-ին համայնքի ավագանին իր N 27-Ն որոշմամբ հաստատել է 2014 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 6 մլն 054 հազար դրամ, ծախսերը՝ 6 մլն 139 հազար 900 դրամ: Պակասորդը կազմել է 85 հազար 900 դրամ, որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը Սարալանջ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմում է 1 մլն 170 հազար դրամ: 2014 թ. հողի հարկը հավաքագրվել է 1 մլն 170 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 100 %-ը:

2014թ. գույքային հարկերը հավաքագրվել է 100%-ով, որը բացարձակ թվով կազմել է 250 հազար դրամ:

2014 թ. դեկտեմբերի 15-ին համայնքի ավագանին իր N 29-Ն որոշմամբ հաստատել է 2015 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 9 մլն 917 հազար 600 դրամ, ծախսերը՝ 10 մլն 012 հազար 700 դրամ:

Հողի հարկը կազմում է 1 մլն 170 հազար դրամ, որից 31.08.2015թ. ժամանակահատվածում հավաքագրվել է 781 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 66.7 %-ը:

Գուքահարկ կազմել է 300 հազար դրամ, որից 31.08.2015թ. ժամանակահատվածում հավաքագրվել է 200 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 66.7 %-ը:

- ***ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ***

Սարալանջի հիմնական դպրոցի աշակերտներին տրվել է 80.0 հազար դրամի նվերներ:

- ***ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ***

Հսկողություն է իականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 2 թույլտվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

- ***ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ***

2015թ. ապրիլի 27-ին կայացել է Սարալանջ համայնքի սեփականություն համարվող հողի աճուրդ: որի ընթացքում վաճառվել է 0.15069 հա բնակելի կառուցապատման նշանակության հող: Աճուրդի արդյունքում համայնքի բյուջե է մուտք եղել 350 հազար դրամ: